

Վոսիորի երջանիկ նեղուցն՝ աջէն Եւրոպան ձախէն Ասիան համբուրելով՝ որ երկրաբանական կամ արուեստական խլրրոմանց բերումով կը ձգի ալ Սեաւ ծովէն դէպի Մարմարան ու Եգէականն՝ օտտած է վաճառական յարաբերութեանց այս երկու լոյծ հրապարակները, իրենց ճոխութեանց գեղեցկութեանց ու պէսպիսութեանց վրայ, վաղեմի նեղոսէն տասընպատիկ աւելի նախամասնութիւններով և դիւրահաղորդ շաւիղներով։ Այսպիսի յարմարադիր չրջաւայրի մը մէջ ալ՝ Հերմեան այն ազամող ցանցն, որ Կ. Պոլիսի երկրորդ բլուրին վրայ ինկած՝ Սիրքէճիէն մինչև Պայազիտ, Զընտան Գափուլէն դէպի Թավուզ Բազար տուրեառի բանուկ ատեան մը յարդարած է, ոլորտապտոյտ վտակներու մէջէ հաւանաբար տարին 12,000,000 ոսկիի ոգևորեալ առևտուրներ մը կը տաղաւարէ, ու կրնայ ապրեցունել կերակրել լիութեամբ առնուազն 2000) հոգի. նոյնը կրնանք ըսել Աղեքսանդրիայի փիւնիկ նաւահանդիստին և կիսով չափ Զմիւռնայի զմրուխտ Ծոցին համար։ Այս դիպող կեդրոններուն մէջ՝ Թուրքահայք ի՛նչ համեմատական յառաջդէմ գնացքի մէջ են՝ չե՛նք կրնար սահմանել առայժմ ճշդութեամբ։

Բայց կրնանք ամէն վստահութեամբ ըսել՝ թէ անոնք շատ հոտ կը մնան Հրեաներէն և Յոյներէն, որոց առաջիններն իրենց արդարամէտ այլամերժ ու անշշուկ չարքաշութեամբն⁽¹⁾ և ահաւո՛ր զգօնութամբ և միւսներն՝ Յոյները՝ ճարպիկ ճկուն և զգայնիկ կրթութեամբ ու իմաստասէ՛ր քրիստոնեա՛յ խոր բերումներով՝ զրաւած են գերազանց դիրք մը թէ՛ մեծ վաճառականութեան թէ՛ սեղանաւորութեան թէ՛ մանր մունր առևտուրներու մէջ, ու մեր թուրք երկրակիցները՝ մանա-

(1) Կ. Պոլիսի ամէնէն հարուստ հրեայն՝ հայ Էսևաֆի մը հաւասար ծախքով կապրի տունով տեղով։